

**Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի
Որոշում**

**Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի վիճակը և
խնդիրները համալսարանում**

(զեկ. Վ. Մելքոնյան)

Արձ. N9 06.02.2015թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի վիճակը և խնդիրների վերաբերյալ զեկուցումը, արձանագրում է, որ ժամանակակից պայմաններում ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար չափազանց կարևոր են բուհում տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ կազմակերպումը և նորարարական ծրագրերով ուսումնական և տնտեսական ուղղությունների զարգացումն ապահովող աշխատանքները:

Վերջին 3 տարիների ընթացքում համալսարանում իրականացվել են հիմնական անհրաժեշտ աշխատանքները ՏՏ ոլորտում ծրագրային, գործընթացային և տեխնիկական մակարդակներում ամուր բազա ստեղծելու նպատակով:

Ստեղծվել են ավելի քան 25 ծրագրեր և ենթածրագրեր բուհի ներկայացման և նրանում ընթացող տարաբնույթ գործընթացների ու աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ:

Վերազինվել և թարմացվել է գրեթե բոլոր ստորաբաժանումների համակարգչային տեխնիկան, ստեղծվել են մոտ 20 համակարգչային և մուլտիմեդիոն լսարաններ ու սենյակներ՝ ընդհանուր առմամբ (3 տարիների կտրվածքով) ձեռք բերելով 200-ից ավելի համակարգիչներ, 56 միավոր տպիչ և սքանավորող սարքավորումներ, 14 պրոյեկտոր, 9 էլեկտրոնային գրատախտակ, ինչպես նաև 300-ից ավել այլ արժեքավոր համակարգչային տեխնիկա ու 1000-ից ավել մանր տեխնիկական ապրանքներ: Ստեղծվել ու ճիշտ կառուցվածքային լուծումներ են ստացել համալսարանի ցանցային, անվտանգության-տեսանկարահանման հանգույցները և սերվերային համակարգերը: Միայն 2014 թվականին նկարահանվել ու լուսաբանվել են 137 տարաբնույթ միջոցառումներ: Կարևոր աշխատանք է կատարվել աշխատակազմի համակարգչային գիտելիքների փոխանցման գործում՝ վերապատրաստելով 46 դասախոսների, ինչպես նաև լուծվել են գրեթե բոլոր տեղեկատվական

և համակարգչային տարատեսակ խնդիրները, որոնք առաջացել են բոլոր ստորաբաժանումների և աշխատակիցների մոտ:

Գիտական խորհուրդը նշում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծրագրերի զարգացման և առավել արդյունավետ իրականացման համար համալսարանում նախատեսվում է շարունակել կազմակերպել նախորդ տարիների իրականացված միջոցառումների համախումբը, ներդնել վերը թվարկած ինովացիոն ծրագրերը, որոնք հիմնականում ուղղված են այնպիսի գործընթացների կազմակերպմանը, ինչպիսիք են.

- էլեկտրոնային դասընթացների ծրագրերի ստեղծում,
- համակարգչային տեխնիկայի և ծրագրային փաթեթների արդյունավետ կառավարում և համալրում,
- տեղեկատվության և գիտելիքի փոխանցման յուրահատուկ մեթոդների ներդրում՝ ուսուցման կազմակերպում համացանցի միջոցով և հեռուստակոնֆերանսների կիրառմամբ,
- էլեկտրոնային ավտոմատացման համակարգերի ներդրում,
- տեխնիկական միջոցների համալրում ու սպասարկում,
- յուրաքանչյուր մասնագիտության համար անհրաժեշտ գիտելիքների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, ուսանողների և դասախոսների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ և համապատասխան մասնագիտական այլ ծրագրերի ուսուցման կազմակերպում:

Այս ամենի հետ մեկտեղ կան նաև խնդիրներ, որոնք հիմնականում կապված են բուհի ուսանողության և աշխատակազմի շրջանում նոր մեթոդների և ծրագրերի իրագեկման ու աշխատանքային այդ գործընթացը բնականոն ապահովելու ու կյանքի կոչելու հարցերում:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Գիտական խորհուրդը նշում է Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի համակարգված, բազմակողմանի և արդյունավետ աշխատանքները:
2. Հանձնարարել ռեկտոր Ա. Թարվերդյանին.
 - 2.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա աջակցել համալսարանում ռադիոհանգույցի վերանորոգման, պետական ատեստավորման քննասենյակներում տեսանկարահանման համակարգի ներդրման և մոնիտորների ձեռքբերման ու մասնաշենքերում տեղադրման գործընթացներին:

- 2.2. Ձևավորել հանձնախումբ համալսարանի համապատասխան ստորաբաժանումներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից (Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ անվամբ) ներդրված ծրագրի համար տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքները կազմակերպելու համար:
3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու. Մարմարյանին.
- 3.1. ՏՏ և ԻԾ կենտրոնի և դեկանատների հետ համատեղ քսանօրյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել համակարգչային լսարանները և տեխնիկական միջոցները առավել արդյունավետ օգտագործմանն ուղղված՝ 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի պլան-ժամանակացույց:
- 3.2. ՏՏ և ԻԾ կենտրոնի հետ համատեղ մեկամսյա ժամկետում մշակել էլեկտրոնային ուսուցման զարգացմանը խթանող ծրագիր-քաղաքականություն՝ միաժամանակ ըստ ֆակուլտետների ապահովելով դասախոսների մասնակցությունն էլուսուցման և համակարգչային վերապատրաստման դասընթացներին:
4. Հանձնարարել ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ա. Դավեյանին.
- 4.1. ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանի հետ համատեղ 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների սկզբից ներդնել դասացուցակի ավտոմատացման ծրագիրը և փորձնական կիրառում կազմակերպել 2-րդ կիսամյակի ուսումնական պրոցեսի համար:
- 4.2. Երկամսյա ժամկետում ներկայացնել որակի կառավարման էլեկտրոնային շտեմարանի ստեղծման համար անհրաժեշտ կառուցվածքը, փաստաթղթային ռեսուրսները և ապահովել համապատասխան ստորաբաժանումների ներգրավվածությունը:
5. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին, ամբիոնների վարիչներին և ստորաբաժանումների ղեկավարներին՝ համալսարանի անձնակազմի միասնական բազա ստեղծելու նպատակով մինչև ս.թ. մարտի 10-ը ՏՏ և ԻԾ կենտրոնին տրամադրել բոլոր աշխատակիցների վերաբերյալ տվյալներ՝ ըստ ներկայացվող ձևաչափի, ինչպես նաև պատասխանատու կոնտակտային անձի թեկնածությունը՝ սույն որոշման 1.2 կետում նշված հանձնախմբի ձևավորման նպատակով:
6. Հանձնարարել տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին.

- 6.1. Մինչև ս.թ. ապրիլի 20-ը ավարտել և փորձնական ներդնել ու շահագործել էլեկտրոնային դեկանատի՝ ուսանողների հաճախումների մոդուլը, ուսանողների, դասախոսների և ուսումնական պրոցեսի մյուս անհրաժեշտ տվյալների բազաների համակարգերը, ինչպես նաև L73 Շուշիի մասնաճյուղի բացվելուց հետո կազմակերպել online տարբերակով հեռահար ուսուցում:
- 6.2. Մինչև ս.թ. սեպտեմբերի մեկն ավարտել ուսանողների և աշխատակիցների համար անձնականացված ուսումնական էլեկտրոնային միջավայրի ստեղծման, պաշտոնական էլ. փոստով բոլոր ուսանողներին և դասախոսներին ապահովելու և WiFi ծածկույթով համալսարանի հիմնական տարածքները ապահովելու աշխատանքները, ինչպես նաև ստեղծել ՀԱԱՀ շրջանավարտների, երախտավորների և աշխատակիցների տվյալների շտեմարան կայքէջը:
- 6.3. Գրասենյակի վարիչ Ն. Դավթյանի հետ համատեղ համալսարանի կառավարման օպերատիվությունը բարձրացնելու նպատակով մինչև ս.թ. հունիսի 20-ը ուսումնասիրել և բուհում ներդնել փաստաթղթաշրջանառության Mullbery ծրագիր-համակարգը և դասընթացներ կազմակերպել համապատասխան աշխատակազմի համար:
- 6.4. Մինչև 2015թ. հունիսի 30-ը նախապատրաստել և հրատարակել SS և ԻԾ կենտրոնի կողմից տրամադրվող մի շարք ծառայությունների ուղեցույցները և բուկլետները:
7. Հանձնարարել ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Պ. Էֆենդյանին՝ SS և ԻԾ կենտրոնի հետ համատեղ մինչև ս.թ. մարտի 15-ը կազմակերպել նոր ստեղծվող 7 համակարգչային լսարանների տեխնիկական վերանորոգման և համակարգչային տեխնիկայով կահավորման և շահագործման աշխատանքները:

Գիտական խորհրդի նախագահ



Կ. Պ. Թարվերդյան

Գիտական խորհրդի քարտուղար



Դ. Ա. Բալասանյան